

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳԱԳԻԿԻ

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հակոբի Բայադյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կարեն Վասիլիի Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Պետական Համալսարան

Պաշտպանությունը կայանալու է դեկտեմբերի 22-ին, ժամը 15³⁰-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի նոյեմբերի 21-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա. Մ. Սուվարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայացման, հասարակության կայունության ու տնտեսության անխափան կենսագործունեության համար իր ռազմավարական դերակատարությունն ունի ապահովագրական գործունեությունը: Ապահովագրական շուկայի գործունեության կայունությունը և կարգավորվածության բարձր մակարդակը երաշխավորում են պետության սոցիալական և տնտեսական կայունությունը, որով էլ պայմանավորված է ապահովագրական շուկայի կարգավորման կարևորությունը: Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական գործունեությունը՝ որպես ֆինանսական համակարգի բաղկացուցիչ օղակ, ունի բավականին կարճ պատմություն, որի պատճառով շուկայի ձևավորման գործընթացներում առավել արդիական է հիմնախնդիրների բացահայտումը, կարգավորման ճիշտ և արդյունավետ մեխանիզմների ու մեթոդների կիրառումը, ինչը հնարավորություններ կընձեռի այս ոլորտի կայունացման և զարգացման համար:

Համաշխարհային ֆինանսական վերջին ճգնաժամի հետևանքով առաջացած գլոբալ խնդիրները, որոնք բնականաբար անդրադարձան նաև ապահովագրական համակարգի գործունեության վրա, օբյեկտիվ պահանջներ առաջադրեցին կարգավորման նոր, հիմնավորված մեխանիզմների ներդրման ուղղությամբ, քանի որ դրանց բացակայությունը կամ ոչ համարժեք և ոչ նպատակահարմար եղանակների ընտրությունն ու կիրառումն ի վերջո կարող են կրկին հանգեցնել լուրջ խնդիրների՝ վտանգելով գործող հարաբերությունների և շուկայի կայունությունը, որից զերծ չէ ՀՀ ապահովագրական շուկան և՛ իրեն ներհատուկ հիմնախնդիրների հետ մեկտեղ:

Ելնելով վերը ներկայացվածից՝ կարող ենք եզրակացնել, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ֆինանսական համակարգում տեղի ունեցած տեղաշարժերի, ֆինանսական ճգնաժամի արդյունքում կատարվող փոփոխությունների և ի հայտ եկած խիստ բացասական հետևանքների հետ կապված՝ կարևոր նշանակություն է ստացել ապահովագրական համակարգի կարգավորման հիմնախնդիրների բացահայտումը և ուսումնասիրությունը, ինչով էլ պայմանավորված է թեմայի **արդիականությունը:**

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա բացահայտել ՀՀ ապահովագրական համակարգի կարգավորման հիմնախնդիրները և մշակել համալիր միջոցառումներ, որոնց ներդրումը կնպաստի

ապահովագրության ոլորտի առավել արդյունավետ կարգավորմանը և զարգացմանը:

Հետազոտության մեջ նպատակային են համարվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ապահովագրության կարգավորման ոլորտին առնչվող տեսական հետազոտությունները, ինչպես նաև առաջավոր միջազգային փորձը,
- բացահայտել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով ստեղծված ապահովագրական շուկայի կարգավորման գլոբալ հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները միջազգային մակարդակում,
- բացահայտել ՀՀ ապահովագրական շուկայի կարգավորման բնագավառում առկա հիմնախնդիրները և ներկայացնել առաջարկներ՝ վերջիններիս արդյունավետ լուծման համար,
- ուսումնասիրել ապահովագրական ընկերությունների ներքին կանոնակարգման գործընթացներում առկա խնդիրները և ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ,
- ուսումնասիրել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտի ներկայիս հիմնախնդիրները և ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկան է, իսկ առարկան՝ Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկայի կարգավորման հիմնախնդիրների լուծման մոդելները:

Հեղազոտության մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքը արտասահմանյան և հայրենական հեղինակների՝ թեմային առնչվող աշխատություններն են, հրապարակումները, տարբեր երկրների ապահովագրական շուկան կարգավորող և վերահսկող մարմինների կողմից կատարված հրապարակումները, տարբեր միջազգային կառույցների հրապարակած հետազոտական և գիտական նյութերը, զեկույցները, ՀՀ Կենտրոնական բանկի, Ազգային վիճակագրական ծառայության և արտասահմանյան միջազգային կառույցների, ասոցիացիաների տեղեկագրերը, ոլորտում առկա վիճակագրական տվյալները, ապահովագրության ոլորտին առնչվող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, դրանց՝ քննարկման փուլում գտնվող նախագծերը: Հետազոտության մեջ կիրառվել են վերլուծության և համադրության, համեմատական վերլուծության, մակաձման և բխեցման մեթոդները:

Հեղազոտության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթը պայմանավորված է աշխատանքի ընթացքում ի հայտ եկած մի շարք տեսական, մեթոդաբանական և գործնական արդյունքներով, որոնցից որպես էական նշանակություն ունեցող կարելի է առանձնացնել հետևյալները.

- մշակվել է ապահովագրական համակարգը կարգավորող կանոնակարգերի, կանոնների կազմման, ընդունման և ներդրման գործընթացի գործուն համակարգ (մոդել), որը ՀՀ կենտրոնական բանկին և ապահովագրական ընկերություններին թույլ կտա առավել արդյունավետ կերպով իրականացնել ընդունվող կանոնակարգերի ներդրման գործընթացը,
- հիմնավորվել է ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի գրանցման և միասնական հարթակի ձևավորման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա խուսափելու արտաքին վերահսկող մարմիններին ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրումից,
- մշակվել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով պատահարների սպասարկման և ելակետային տվյալների հավաքագրման փուլի մասնագետների անհրաժեշտ որակավորման կարգ՝ փորձաքննության հաջորդ փուլերի ոչ ճշգրիտ կարգավորումը բացառելու նպատակով:

Հեղազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է վերջին տարիներին ֆինանսական ոլորտում որոշակի հիմնախնդիրների առաջացմամբ և ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման արագացող տեմպերի պայմաններում ոլորտի կարգավորման առավել առաջատար, կայուն և հստակ, գործուն մեխանիզմների, համակարգերի մշակման և ներդրման անհրաժեշտությամբ:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառություն ստանալ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական շուկայի կարգավորման, հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման բնագավառում, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների գործունեության ծրագրավորման ընթացքում:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնում, «Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ԻԱՄ-ում, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ում, ՀՀ Կենտրոնական բանկի շահագրգիռ ստորաբաժանումների

մասնագետների հետ: Հետազոտության հիմնական դրույթները հրապարակված են վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածք: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 157 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, դրա օբյեկտն ու առարկան, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել է աշխատանքի գիտական նորույթն ու նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ապահովագրական համակարգի կարգավորման անհրաժեշտությունը և արդի հիմնախնդիրները»** գլխում ներկայացվել են ապահովագրության ոլորտի կարգավորման տեսական հիմունքները և միջազգային փորձը: Ներկայացվել են ապահովագրական շուկայի կարգավորման հիմնական ուղղությունները, սկզբունքները, որոնք ներկայումս ընդհանրական են յուրաքանչյուր ապահովագրական շուկայի կարգավորման և վերահսկողության բնագավառում՝ կարևորելով ապահովագրական շուկայի կարգավորման գործում պետական միջամտությունը, դրա դերակատարությունը և անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ապահովագրության ոլորտի առանձնահատկությունները:

Ապահովագրական գործունեությունը՝ որպես երկրի ֆինանսական համակարգի հիմնական ուղղություններից մեկը, իր լուրջ բաժինն ու դերակատարությունն ունի ցանկացած երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: Այս փաստը ակնհայտ արտացոլվում է ՀՆԱ-ում ապահովագրավճարների տեսակարար կշռի ցուցանիշի միջոցով:

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2005-2013թթ. ընկած ժամանակահատվածում որոշ երկրներում համախառն ապահովագրավճարների տեսակարար կշիռը նրանց ՀՆԱ-ում (տոկոսներով):

Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ ցանկացած զարգացած ապահովագրական շուկա ունեցող երկրում ապահովագրական շուկան երկրի տնտեսության մեջ ունի բավականին մեծ մասնաբաժին, ուստի այս ոլորտի գործունեությունից էլ մեծ չափով կախված է տնտեսության և համապատասխան

չափով էլ երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորումն ու զարգացման կայուն տեմպերի ապահովումը:

Ընդհանուր նշանակության խնդիրների մեծամասնությունը, այդ թվում՝ մրցակցային բնական միջավայրի պահպանումը, հնարավոր չէ լուծել առանց պետական կարգավորման պատշաճ միջամտության և կարգավորման համապատասխան մեխանիզմների գործարկման:

Աղյուսակ 1

Որոշ երկրների համախառն ապահովագրավճարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2005-2013թթ. (տոկոսներով)¹

Երկիր/ Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ավստրիա	6.2	6.0	5.8	5.7	5.9	5.9	5.5	5.3	5.3
Իսպանիա	5.4	5.4	5.2	5.4	5.8	5.4	5.7	5.5	5.4
Գերմանիա	7.1	7.0	6.7	6.7	7.2	7.2	6.8	6.8	6.8
Շվեդիա	7.5	7.3	7.4	7.5	8.0	8.1	7.7	6.4	6.9
Բելգիա	11.1	9.2	9.3	8.5	8.3	8.3	7.9	8.6	7.3
Իտալիա	7.6	7.1	6.4	5.8	7.8	8.1	7.0	6.7	7.6
Պորտուգալիա	8.7	8.2	8.1	8.9	8.6	9.5	6.8	6.6	7.9
Ֆրանսիա	10.2	11.0	10.4	9.5	10.6	10.7	9.5	8.9	9.1
Դանիա	7.9	8.3	8.5	8.7	9.1	8.9	9.3	8.6	9.5
Շվեյցարիա	10.6	9.7	9.2	9.4	9.7	9.6	9.5	9.6	9.8
Ֆինլանդիա	9.1	9.0	8.4	8.5	9.4	10.4	9.6	10.3	11.3
Մեծ Բրիտանիա	14.3	14.9	17.6	13.5	12.9	11.9	12.1	13.0	12.2
Նիդեռլանդներ	9.5	13.6	13.1	13.2	13.6	13.3	13.1	12.5	12.5

Ինչպես ներկայացվում է անգլիական Chartered Insurance Institute-ի կողմից հրատարակված ապահովագրության գրականության մեջ², պետական կարգավորման հիմնական նպատակը հասարակության պաշտպանությունն է, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառումների իրականացումը:

Ինքնակարգավորումը նույնպես իր ուրույն դերն ու նշանակությունն ունի շուկայի կարգավորման գործում: Ապահովագրական շուկայի ինքնակարգավորման

¹ Աղբյուրը՝ OECD պաշտոնական կայքէջ, “Insurance Indicators”, 14 April 2015, <https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=INSIND>,

² Աղբյուրը՝ The Chartered Insurance Institute, “Risk, regulation and capital adequacy”, April 2009, page 13/2

կարևորությունն այն է, որ չնայած պետության կողմից իրականացվում է կարգավորիչ միջամտություն, այնուհանդերձ պետությունը ի վիճակի չէ միայնակ կարգավորել ոլորտի գործունեությունը, բացահայտել բոլոր հնարավոր խնդիրները, շուկայի ներքին և արտաքին ռիսկերը, սպառնալիքները, ինչը պայմանավորվում է ապահովագրական շուկաների աստիճանական ընդլայնմամբ և գործընթացների բարդացմամբ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում պետության կողմից իրականացվող կառավարման, կարգավորման գործառույթների որոշ մասը փոխանցել նշված կառույցներին³: Ապահովագրական շուկայի ինքնակարգավորման նպատակով ստեղծվում են տարբեր միություններ, ասոցիացիաներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր առանձին նպատակները և խնդիրները, ընդ որում՝ այստեղ կարևոր է նշել, որ նման միությունների ստեղծման գործում շատ հաճախ իր միջամտությունն է ունենում հենց պետությունը՝ խրախուսելով նմանատիպ կազմակերպությունների ստեղծումը և աջակցելով դրանց:

Չնայած ներկայումս գործող բազմաթիվ ապահովագրական ասոցիացիաներին և միություններին՝ որպես ապահովագրական շուկայի ինքնակարգավորող հիմնական (խոշոր) ինստիտուտներ՝ կարելի է առանձնացել հետևյալ երկու միջազգային կառույցները.

1. Ապահովագրության վերահսկողների միջազգային ասոցիացիա (International Association of Insurance Supervisors (IAIS)), որը, հիմնադրվելով 1994թ.-ին, այսօր արդեն ներկայացնում է 140 երկրների ապահովագրական շուկաները կարգավորող և վերահսկող մարմինների միություն⁴:
2. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organisation for Economic Co-operation and Development (OECD)), որը հիմնադրվել է 1961թ.-ին, և ներկայումս վերջինիս անդամ երկրների թիվը հասել է 34-ի⁵:

Ընդհանրացնելով նշված և նմանատիպ այլ կառույցների գործունեությունը, ընդհանրացվել է, որ վերջիններիս հիմնական խնդիրը ապահովագրության շուկաների կարգավորման և վերահսկողության սկզբունքների, արդյունավետ մեթոդների, մեխանիզմների մշակումն ու ներդրումն է՝ նպատակ ունենալով ստեղծել

³ Աղբյուրը՝ Т. А. Федорова “Страхование” 3-е издание, // “Магистр”, Москва, 2009г., стр. 225

⁴ Աղբյուրը՝ International Association of Insurance Supervisors պաշտոնական կայքէջ, <http://iaisweb.org>

⁵ Աղբյուրը՝ Organization for Economic Co-operation and Development (OECD) պաշտոնական կայքէջ, <http://www.oecd.org>

ապահովագրական գործունեության կարգավորման և վերահսկողության միասնական համակարգ:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվել է ապահովագրական շուկայի կարգավորման ոլորտում միջազգային առաջատար փորձը՝ հանձինս Մեծ Բրիտանիայի և Եվրամիության՝ առավել կենտրոնանալով Եվրամիության՝ վերջին տասնամյակներում ձեռք բերած փորձի և ներկայիս բնորոշ զարգացումների նկարագրության վրա: Կարգավորման փորձի ուսումնասիրման և վերլուծության հարցում Եվրամիության ընտրությունը պայմանավորվել է միջազգային ապահովագրական շուկայի զարգացման ներկա միտումներով, որոնք հիմնականում ուղղված են հենց այս միության կարգավորման մոդելների, եղանակների կրկնօրինակմանը և դրանց ներդրմանը: Ուսումնասիրվել և վերլուծվել են Եվրամիության՝ կարգավորման առավել արդիական համակարգերը, որոնցից ընդգծվել են Վճարունակություն-2 համակարգը (աղյուսակ 2) և տնտեսագետ Ալեքսանդր Լամֆալուշի կողմից մշակված և 2001թ. Եվրամիության կողմից ընդունված օրենսդրական փոփոխությունների գործընթացի որակի բարելավմանը, դրանց արագ ներդրմանն ուղղված նոր մոդելը:

Հաշվի առնելով վերջին տարիներին ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գլոբալ խնդիրները, որոնք պայմանավորված էին ֆինանսական ճգնաժամի առաջացմամբ՝ աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացվել են ապահովագրական շուկայի դերը ճգնաժամի առաջացման պատճառներում և կարգավորման ոլորտում առկա բացթողումները:

Ֆինանսական ճգնաժամը որոշակի պահանջներ առաջադրեց ապահովագրական համակարգը կարգավորող և վերահսկող մարմինների համար՝ կարգավորման գործող մեխանիզմներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու գործում: Նշված պահանջները վերաբերում են ինչպես միկրոմակարդակին, որն առնչվում էր յուրաքանչյուր առանձին ընկերությանը, այնպես էլ մակրոմակարդակին, որն իր հերթին վերաբերում էր ամբողջ ֆինանսական համակարգի կայունությանը:

Նշված փոփոխությունները խմբավորված կերպով վերաբերում են հետևյալ հիմնական ուղղություններին⁶.

- կապիտալի նկատմամբ պահանջների համարժեքությունը,
- ապահովագրական խմբերի վերահսկողության բացերը,
- իրացվելիության բարելավումը,

⁶ Աղբյուրը՝ Swiss Reinsurance Company Economic Research & Consulting, “Swiss Re, sigma No. 3/2010”-“Regulatory issues in insurance”, 2010

- ապահովագրական համակարգից բխող համակարգային ռիսկերը:

Վերը նշված չորս հիմնական ուղղություններով առանձին-առանձին ուսումնասիրվել և վերլուծվել են առկա խնդիրներն ու բացթողումները, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ ֆինանսական ճգնաժամի առաջացման համար:

Աղյուսակ 2

Վճարունակություն-2-ի մոդուլների պահանջները⁷

Մոդուլ I Քանական պահանջներ	Մոդուլ II Որակական պահանջներ	Մոդուլ III Տեղեկատվության բացահայտման պահանջներ
<ul style="list-style-type: none"> ▪ Պահուստների, պարտավորությունների գնահատման պահանջներ, ▪ Վճարունակության կապիտալի պահանջներ (SCR), ▪ Նվազագույն կապիտալի պահանջներ (MCR): 	<ul style="list-style-type: none"> ▪ Սեփական ռիսկերի և վճարունակության գնահատում, ▪ Ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ներդրման պահանջ, ▪ Վերահսկող մարմնի կողմից վճարունակության ռիսկերի կառավարման համակարգերի վերահսկում և դրանց միջամտություն: 	<ul style="list-style-type: none"> ▪ Կարգավորող, վերահսկող մարմնին տեղեկատվության տրամադրում, ▪ Վճարունակության և ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հասարակության համար մատչելի տեղեկատվության հրապարակում, ▪ Նպաստում շուկայի կանոնակարգվածությանը՝ համեմատական, վերլուծական տեղեկատվության հրապարակմամբ:

⁷ Աղբյուրը՝ European Commission պաշտոնական կայքէջ, <http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=IP/01/792&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en>

Ֆինանսական ճգնաժամի վերաբերյալ կատարված վերլուծությունների արդյունքում նկարագրվել են այն միջոցառումները և ուղիները, որոնք անհրաժեշտ է իրականացնել առկա թերություններն ապագայում չկրկնելու և նմանատիպ խնդիրներից խուսափելու նպատակով:

Ըստ ատենախոսի, ֆինանսական ճգնաժամի արդյունքում ապահովագրական ընկերությունների վնասների մեծությունները կախված են եղել իրենց գործունեության մոդելների կառուցվածքից, մասնավորապես՝ այն ապահովագրական ընկերությունները, որոնց գործունեության մեջ լայն տեղ են զբաղեցրել բանկային գործառնությունները (banking operations) կամ վարկային ռիսկերը, կրել են խոշոր կորուստներ: Ելնելով հենց այդ հանգամանքից՝ պետական աջակցություն ստացան այն սահմանափակ քանակությամբ ապահովագրական ընկերությունները, որոնց գործունեության մեջ նշանակալի դերակատարություն ունեին բանկային գործառնությունները⁸:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ հետազոտողի կարծիքով ֆինանսական ճգնաժամը ուղղակիորեն կապված չէր ապահովագրական համակարգի գործունեության թերությունների և բացթողումների հետ, սակայն բարձրացված հիմնական խնդիրը կրկին վերաբերում էր ֆինանսական խմբերի, կոնգլոմերատների գործունեության կարգավորման և վերահսկողության համակարգերի լուրջ խափանումներին և բացթողումներին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ապահովագրական համակարգի կարգավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել է ՀՀ ապահովագրական շուկայի կարգավորման պատմական փորձը, զարգացման առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել նախորդ դարի սկզբին ԽՍՀՄ ստեղծման ժամանակաշրջանից վերջինիս կազմում գոյություն ունեցած ապահովագրական համակարգի զարգացման և կարգավորման հարցերին: Այնուհետև ներկայացվել է ապահովագրական գործունեության զարգացումը և կարգավորման գործընթացը Հայաստանի Հանրապետության առաջին տարիներին:

Որպես ներկա ժամանակաշրջանում ՀՀ ապահովագրական շուկայի կարգավորման և վերահսկողության ուղղություններ, զարգացումներ, առանձնացվել են վերջին հինգ տարիները և ներկայացվել այդ ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, կարգավորման առանձնահատկությունները, հիմնախնդիրները:


⁸ Աղբյուրը՝ The Geneva Association, “Systemic risk in insurance” - An analysis of insurance and financial stability, March 2010

Հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծություններ են իրականացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգերի և ապահովագրական ընկերությունների գործունեության վրա դրանց ունեցած ազդեցությունների ուղղությամբ, որոնց արդյունքում առավել ընդգծված են դարձել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապահովագրական շուկայի կարգավորման խստացման միտումները: Որպես օրինակ՝ ներկայացվել է 2006-2014թթ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերությունների կապիտալի նկատմամբ պահանջների փոփոխության արդյունքում ընկերությունների կանոնադրական կապիտալի փոփոխության դինամիկան (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի փոփոխության դինամիկան 2006-2014թթ.⁹

Ներկայացված են 1,000 ՀՀ դրամ



Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ ապահովագրական համակարգի կարգավորման հեռանկարները»** գլխում, ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկայի կարգավորման ոլորտում առկա

⁹ Աղբյուրը՝ «Արմինֆո» տեղեկատվական գործակալություն, 2006թ., 2007թ., 2008թ., 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. «Հայաստանի ապահովագրական ընկերությունների ոնեկինգ»


թերությունները, շուկայի զարգացմանը խոչընդոտող առաջնային և էական հիմնախնդիրները և դրանց պատճառների ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից տրվել են դրանց լուծման հնարավոր ուղիներն ու առաջարկությունները:

Որպես ապահովագրական համակարգը կարգավորող իրավական ակտերի ընդունման և ներդրման գործընթացում բացահայտված հիմնախնդիրների լուծում առենախոսի կողմից առաջարկվել է ներդնել ՀՀ ապահովագրական շուկայի համար մշակված նոր մոդելը (գծապատկեր 2), որը միաժամանակ հաշվի է առնում եվրամիության կողմից բարեհաջող կերպով ընդունված և բավական դրական ու արդյունավետ կիրառված Լամֆալուչիի մոդելը: Ներկայացված մոդելը «Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ԻԱՄ-ին հնարավորություն կընձեռի ակտիվորեն համագործակցել թե՛ ՀՀ Կենտրոնական բանկի, և թե՛ ՀՀ ապահովագրական ընկերությունների հետ՝ իր վրա վերցնելով ոլորտի կարգավորման որոշ գործառույթներ և պարտականություններ:


Համաձայն գծապատկեր 2-ում ներկայացված մոդելի՝ հեղինակի կողմից առաջարկվել է իրականացնել միջոցառումների և քայլերի հետևյալ ծրագիրը, որը բաղկացած է 4 հիմնական փուլերից.

- 1-ին մակարդակը հանդիսանում է օրենսդրական փաթեթի ընդունման սկզբնական հիմնական փուլը:
- 2-րդ մակարդակում իրականացվող միջոցառումները պետք է համապատասխանեն 1-ին մակարդակում ընդունված ընդհանուր սկզբունքներին: 2-րդ մակարդակում իրականացվում են օրենսդրական փաթեթի փոփոխություններ, ճշգրտումներ:
- 3-րդ մակարդակում «Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ԻԱՄ-ը համակարգում է 1-ին և 2-րդ մակարդակներում ընդունված օրենսդրական ակտերի ներդրումը, իսկ «Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ԻԱՄ գործառույթներն են օրենսդրական ակտերի մեկնաբանման միասնական ուղեցույցերի մշակումը, ընդհանուր սկզբունքների, ստանդարտների մշակումը, դրանց կիրառման գնահատումը,
- 4-րդ մակարդակում ՀՀ ԿԲ Ապահովագրական համակարգի կարգավորման բաժինն իրավունք ունի Ապահովագրական ընկերությունների վերահսկողության առաջին և երկրորդ բաժիններին միջնորդելով վարչական պատասխանատվության ենթարկելու ընդունված օրենսդրական ակտերի խախտումների դեպքում:


**Լամֆալուչի գործընթացի ադապտացված մոդելը ՀՀ-ում
1-ին մակարդակ: Օրենսդրական փաթեթ**




2-րդ մակարդակ: Միջոցառումների իրականացում



3-րդ մակարդակ: 1-ին և 2-րդ մակարդակների միջոցառումների ներդրման ապահովում



4-րդ մակարդակ: 1-ին և 2-րդ մակարդակների միջոցառումների ներդրում



Ապենսիոսության եզրակացություններում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները.

1. ՀՀ ապահովագրական շուկայի ձևավորման ժամանակաշրջանում առկա հիմնախնդիրների, թերությունների և բացթողումների մեծ մասն ունի զարգացման տվյալ փուլին ներհատուկ բնականոն ծագում, քանի որ օբյեկտիվորեն հնարավոր չէ շուկայի ձևավորման ժամանակաշրջանն անցնել առանց բազմաթիվ խնդիրների, խոչընդոտների և կարգավորման բացթողումների:
2. ՀՀ ապահովագրական համակարգը կարգավորող կանոնակարգերի և այլ իրավական ակտերի ընդունման և ներդրման գործընթացներում առկա են հիմնախնդիրներ, որոնք հանգում են հետևյալին.
 - ապահովագրական ընկերությունների կողմից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ փոփոխությունների, առաջարկությունների տրամադրումը ունի ձևական բնույթ կամ որոշ դեպքերում ընդհանրապես չի իրականացվում,
 - իրավական ակտերի ընդունումն իրականացվում է առանց վերջիններիս պատշաճ գործնական կիրառության, փորձարկման, ՀՀ ապահովագրական շուկայի առանձնահատկություններին համապատասխանեցնելու:
3. ՀՀ «Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ԻԱՄ-ի դերակատարությունը գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա ՀՀ Կենտրոնական բանկի և ապահովագրական ընկերությունների միջև կենտրոնացված համագործակցության և ոլորտի կարգավորման գործընթացներում պատշաճ հետադարձ կապի ապահովման գործում:
4. ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության ներքին կանոնակարգվածությունը, կարծում ենք, ներկայումս գտնվում է անբավարար մակարդակի վրա, քանի որ
 - ներքին կանոնակարգերը և այլ ներքին կարգավորող փաստաթղթերը հիմնականում ունեն ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահանջների ձևական բավարարման բնույթ և ժամականակի ընթացքում չենթարկվելով թարմացումների, փոփոխությունների՝ ընկերությունների գործունեության վրա չունեն կարգավորման էական ազդեցություն,
 - ապահովագրական ընկերությունների ղեկավար մարմինների կողմից հետևողական քաղաքականություն չի վարվում ներքին ընթացակարգերի մշակման և դրանց պահպանության ուղղությամբ:

5. ՀՀ ապահովագրական ընկերությունների ներքին աուդիտի գործունեությունը չի համապատասխանում իր գործառույթներին և բուն նպատակին, որը պայմանավորված է ներքին աուդիտի գործունեության նկատմամբ ընկերությունների կառավարման և ղեկավար մարմինների կողմից պահանջների բացակայությամբ, որի արդյունքում ՀՀ ապահովագրական շուկայում ըստ էության չի գործում ներքին աուդիտի ինստիտուտը:
6. ՀՀ ապահովագրական ընկերություններում ակտուարային հաշվարկները դեռևս իրականացվում են բացառապես օրենքով սահմանված պահանջները բավարարելու նպատակով՝ կրելով ձևական բնույթ, ընկերությունները չեն առաջնորդվում սեփական հաշվարկների հիման վրա տեխնիկական պահուստների, նվազագույն կապիտալի ձևավորման սկզբունքներով, որի հետևանքով ՀՀ ապահովագրական շուկայի գործունեությունն ու կարգավորումն իրականացվում են հետ մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից համակարգերից, մասնավորապես՝ Վճարունակություն-2 համակարգից:
7. Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ ապահովագրական շուկայում արձանագրվող կենտրոնացվածության հստակ ընդգծված միտումը, ինչն առաջին հերթին, պայմանավորված է ապահովագրական ընկերությունների թվաքանակի կրճատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ այն ունի զարգացման միտում և առաջիկա տարիներին կանխատեսվում է ապահովագրական ընկերությունների թվաքանակի կրճատում, ինչը կհանգեցնի շուկայի խիստ կենտրոնացվածության:
8. Ապահովագրական շուկայի կարգավորման ոլորտում առաջարկում ենք ներդնել մշակված նոր մոդելը՝ իրավական ակտերի մշակման, ընդունման և ներդրման գործընթացների արդյունավետության ապահովման նպատակով:
9. Ապահովագրական շուկայի կարգավորման և վերահսկողության արդյունավետ ու ժամանակակից սկզբունքների, ստանդարտների, համակարգերի ներդրման նպատակով կարևորում ենք ՀՀ Կենտրոնական բանկի անդամակցությունը Ապահովագրության վերահսկողների միջազգային ասոցիացիային:
10. ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության կանոնակարգման, ընկերությունների ներսում գործընթացների հստակեցման նպատակով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանել ապահովագրական ընկերությունների սերտիֆիկացման պահանջը որակի

կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային ստանդարտներով մինչև 2017թ. հունվարի 1-ը՝ սահմանելով սերտիֆիկացումն իրականացնող ընկերությունների ցանկը:

11. Ապահովագրական ընկերությունների արտաքին վերահսկող մարմիններին ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրումից խուսափելու նպատակով առաջարկում ենք ներդնել ընկերությունների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային հարթակ:
12. ՀՀ ապահովագրական շուկայում մրցակցային բավարար պայմաններ ստեղծելու նպատակով կարևորում ենք պետության միջամտությունը ներդրումային բարենպաստ պայմանների ստեղծմանը, որն առավել գրավիչ և շահավետ պայմաններ կապահովի արտասահմանյան՝ առավելապես եվրոպական զարգացած ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների համար մուտք գործելու ՀՀ ապահովագրական շուկա, ինչը կհանգեցնի մրցակցության բարձրացմանն ու շուկայի զարգացմանը:
13. Կարծում ենք, որ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ հետևյալ ուղղություններով.
 - սահմանափակ և անսահմանափակ լիազորված վարորդներով ԱՊՊԱ պայմանագրերի ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանության վերանայում՝ սահմանելով լիազորված վարորդների առավելագույն քանակ,
 - ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի վայր մեկնող ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների որակավորման կարգի և չափանիշների (առնվազն ներառելով սույն ատենախոսության երրորդ գլխում ներկայացված թեմաների ցանկը) մշակում և ընդունում,
 - «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների վերահսկողության գործառույթի վերականգնում՝ սահմանելով ապահովագրական ընկերությունների տեղերում ստուգման համապատասխան ժամանակացույց և ծրագիր:
14. ԱՊՊԱ տեղեկատվական ռեգիստրի հետ կապված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է վերանայել համակարգի գործունեությունը՝

առավել կենտրոնացնելով տեղեկատվական բազայի տվյալների հավաքագրման գործընթացը և սահմանելով տվյալների փոփոխության 6-ամսյա պարբերականության ժամկետ, ինչպես նաև ավտոմատացման արդի լուծումների միջոցով ընկերություններին հնարավորություն տալ ստանալու պատահարների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Վ. Գևորգյան, «Ֆինանսական ճգնաժամը և ապահովագրական համակարգի հիմնախնդիրները» // «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան 2012թ., #12 (150), էջ 34-36:
2. Վ. Գևորգյան, «Ապահովագրական համակարգի զարգացումը ՀՀ-ում» // «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան 2012թ., #12 (150), էջ 37-39:
3. Վ. Գևորգյան, «Ապահովագրական շուկայի կարգավորումը Եվրամիությունում» // «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Երևան 2013թ., 1-3 (36), էջ 179-182:
4. Վ. Գևորգյան, «Ապահովագրական համակարգի կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» // «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Երևան 2013թ., 1-3 (36), էջ 183-191:
5. Վ. Գևորգյան, «Ապահովագրական համակարգի կարգավորման փորձը Մեծ Բրիտանիայում» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան 2015թ., #4, էջ 16-21:
6. Վ. Գևորգյան, «ԱՊՊԱ համակարգի արդի հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան 2015թ., #4, էջ 93-100:

ГЕВОРКЯН ВАРТАН ГАГИКОВИЧ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ СТРАХОВОЙ СИСТЕМЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 22-ого декабря 2015г., в 15³⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике при Российско-Армянском (Славянском) университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

Р Е З Ю М Е

Страховая деятельность имеет стратегическую значимость как для становления финансовой системы Республики Армения, так и для обеспечения стабильности в обществе и бесперебойного функционирования экономики. Стабильная деятельность страхового рынка и высокий уровень его регулирования гарантируют социальную и экономическую стабильность государства, что обуславливает необходимость регулирования страхового рынка. Страховая деятельность в РА, как неотъемлемая часть финансовой системы, имеет довольно короткую историю. В этой связи выявление проблем, существующих в этой сфере, использование правильных и эффективных методов и механизмов регулирования в процессе становления рынка, становится крайне актуальной задачей.

Кроме того, в течении последних годов, в связи с негативными последствиями финансового кризиса, которые, несомненно отразились и на системе страхования, важное значение приобрело обнаружение и изучение проблем и механизмов регулирования страховой системы, отсутствие или ненадлежащее применение которых, в конечном итоге, может привести к серьезным проблемам, угрожая стабильности страхового рынка РА.

На основании всего вышесказанного, можно утверждать, что за последние несколько лет в результате изменения в финансовом рынке и возникших негативных последствий финансового кризиса, выявление и исследование проблем регулирования страховой системы приобрело высокую значимость, чем и обуславливается актуальность темы исследования.

Объектом исследования является страховой рынок Республики Армения. Предметом исследования являются модели решения проблем регулирования страхового рынка Республики Армения.

Основной целью работы является выявление ключевых проблем регулирования страховой системы РА на основе изучения и анализа международного опыта и разработка комплексных мер, внедрение которых будет способствовать развитию и регулированию страховой сферы.

Для достижения поставленной цели в диссертационной работе поставлены следующие задачи:

- изучить теоретические исследования, а также международный опыт, относящиеся к проблематике регулирования страхового рынка,
- выявить глобальные проблемы регулирования страхового рынка, возникшие в связи с мировым финансовым кризисом, а также понять причины возникновения этих проблем на международном уровне,
- выявить существующие системные проблемы регулирования страхового рынка Республики Армения и выдвинуть предложения по их эффективному разрешению,
- исследовать проблемы, связанные с процессами внутреннего регулирования страховых компаний, и выдвинуть предложения по их решению,
- исследовать существующие проблемы в области обязательного страхования автогражданской ответственности и выдвинуть предложения по их решению.

В результате проведенного исследования получены теоретические, методические и практические результаты, из которых в качестве научной новизны можно выделить следующие:

- Разработана система (модель), которая позволит Центральному Банку Республики Армения и страховым компаниям наиболее эффективно осуществлять процесс принятия и внедрения порядков, правил и положений, регулирующих страховую систему,
- Обоснована потребность создания единой платформы для регистрации внутренних правовых актов, регулирующих деятельность страховых компаний, которая даст возможность избежать риска предоставления недостоверной информации внешним органам контроля,
- В области обязательного страхования автогражданской ответственности разработано положение обязательной сертификации специалистов, ответственных за первоначальное обслуживание страховых случаев и сбор исходящих данных, которое позволит избежать неточного регулирования следующих этапов экспертизы.

VARDAN GAGIK GEVORGYAN

MODERN ISSUES OF INSURANCE SYSTEM REGULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of thesis for receiving the degree of Doctor of Economics in specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on December 22, 2015 at 15³⁰ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian (Slavonic) University: 123 H. Emin str., Yerevan 0051.

S U M M A R Y

Insurance activity is of strategic importance for the formation of the financial system of the Republic of Armenia, for the stability of society and for the smooth operation of the economy. The stability of the activity of the insurance market and a high level of regulation ensure social and economic stability of the state, which conditions the importance of regulating the insurance market. Insurance activity of the Republic of Armenia, as an integral part of the financial system, has a fairly short history, thus the identification of main issues, the use of correct and effective methods and mechanisms in the process of market formation becomes more important. Aforesaid will enable the development and stabilization of this sensitive sector.

Apart from this, the negative consequences that emerged as a result of the financial crisis of the past years contributed to the importance of identifying the fundamental issues related to the mechanisms of regulation of the insurance system. The lack or improper use of those mechanisms, ultimately, can lead to serious problems, threatening the stability of the insurance market of Armenia.

Based on the foregoing, it can be argued that in the past few years because of the changes of the situation in the financial market and negative effects of the financial crisis, the identification and study of regulation problems of the insurance system becomes highly important. These in fact come to prove the significance of this research.

The object of the research is the insurance market of the Republic of Armenia. The subjects of the research are the regulation models of the insurance industry in the Republic of Armenia.

The purpose of this research is to identify key issues of insurance regulation system of Republic of Armenia, based on the study and analysis of international best practices and to develop comprehensive measures, implementation of which will contribute to the development and regulation of the insurance industry.

The objectives of the research are:

- Enquire into the theoretical research, as well as international best practice on the regulation of the insurance industry,
- Explore the global issues of the insurance market regulation caused by the world financial crisis and the causes of their occurrence on the international platform,
- Expose the global issues present in the regulation of the insurance market of the Republic of Armenia and put forward suggestions for their effective solution,
- Explore issues related to the internal regulation processes of the insurance companies and put forward suggestions for their effective solution,
- Explore the issues present in the sphere of compulsory motor third party liability insurance and present recommendations for their solution.

The scientific novelty comprises a set of theoretical, methodological and practical outcomes revealed during the research. The most essential ones are:

- An efficient system (model) of policies, as well as a process of preparation, adoption and implementation of rules regulating the insurance market has been designed to allow the Central bank of the Republic of Armenia and the insurance companies to implement the adopted policies more effectively,
- The necessity of creating a joint platform in order to register the internal policies regulating the activity of the insurance companies has been substantiated, which will help to avoid the provision of non-credible information to external supervisors,
- A regulation for necessary certification of specialists in charge of registering the initial data and the data collected from compulsory motor third party liability insurance cases has been designed in order to avoid non-accurate regulation of the next levels of expertise.